ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25հուլիսի 2016 թվականի N 91-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ/ ենթակետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2016թվականի հուլիսի 25-ի <<Ա.Մնացականյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N61 որոշումը, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.2016թ. հուլիսի 26-ից լուծել <<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Բեգլարյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը և օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ալեքսանյան Հովիկ	աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Ասրյան Աշոտ	աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Հարությունյան Գալյա	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ
Բեգլարյան Էդվարդ	<<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ ժամանակավոր պաշտոնակատար (հանձնող)
Մնացականյան Արթուր	<<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող):

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. հուլիսի 25
ք. Կապան